

# ՏԻԵԶԵՐՔԻ ԿԶՕՐԱԳՈՅՆ ՈՒԺԸ ՍԷՐՆ Է

Ա. Մեսրոպ իր վերջին ջունչին գոյգ մը պատուերնեք տուաւ. *«Աէրը»*.

*Արարանութիւնն*՝ գորս բազկատարած աւանդեց իր աջակերտներուն, իր ջինջ հոգւոյն վերջին ջունչին հետ մահուան անկողնին վրայ: Ան իր գիւտը ըրաւ հայուն տալու համար այդ Գիրքը որ կը սորվեցնէ. **«Սիրեցէ՛ք զմիմիանս»**: Հօր Աստուծոյ սէրը հանդէպ իր Որդւոյն՝ պատուանդանն է տիեզերքին ու երաջխիհը մարդոց փրկութեան: Սէրը այն հզօրագոյն միջոցն է, որով բնութիւնը կ'ապահովէ կեանքի շարունակութիւնը սերունդէ սերունդ, թէ մարդկային, թէ կենդանական և թէ բուսային: Իսկ փառքի և մեծարանքի սէրը, մարդը կորուստի կը տանի:

Աստուած եղաւ **«Հա՛յր Երկնաւորը»** համա՛յն մարդկութեան, *«որովհետեւ ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր Արածին Որդին տուաւ, որպէ՛սզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ»*: Յիսուսի Մարդեղութիւնը՝ խորհրդագագաց յայտնագրութիւնն է անհննելի Հօր Աստուծոյ քաղցրահայեաց ու խորածածուկ **սիրո՛յ խորհուրդին**: Աստուածային ստեղծագործ սէրը ինչպէս որ խոնարհեցաւ (իջաւ), աշխարհ պարգեւելու սիրոյ և իմացական կեանք մարդ արարածին, մարդ՝ ի՛նք եւս *բարձրանալու* է դէպի տիեզերական Սէրը և կեանքը ուր պիտի գտնէ իր Արարիչ Տէրը և **կեանքին իմաստը**:

Աշխարհի հետ խօսելու միակ լեզուն սերն է: Աստուծոյ միտքը յայտնուած է Իր Որդւոյն՝ Յիսուսի սիրոյն մէջ: Գողգոթայի սարը Խաչեցեցալին անձնուրացութիւնը, վիշտին սրբութիւնը, հաւատքին զօրութիւնը և սիրոյ ծննդագործող երկունքն է: Խառնակ ամուսնութեան մը լուծման բանալին **փոխադարձ** սէրն է: Սիրե՛լը, կարթն է հոգիներ որսալու: Սիրե՛լ միաւորուիլ և ձուլուիլ կը նշանակէ Հայր Երկնաւորին հետ: Պատուեցաւ հազար տարիներու խաւառակուծ ծիսակատարութեան վարագոյրը յայտնաբերելու Աստուծոյ սէրը:

«Ազատ սիրոյ և հեջտանքի գաղափարը հրաշալի է, բայց պատիւը ա՛լ աւելի վեհ գաղափար է»-- **Ռաբինտրանտա Քակոր**: Սիրել և ծառայել վարակիչ ուժ մը դառնալու են: Զօրավար Անդրանիկ դարձաւ ազգային հերոս, որովհետեւ անսահմանօրէն սիրած էր իր բազմաչարչար ու հերոս ժողովուրդը: Բոլոր առաքինութիւնները սահմանող, և դասակարգող մեծագոյն խորհուրդը սերն է: «Գերագոյն պատուիրանը Սէրն է, անարատ սրտէ, մահուք խղճմտանքէ և անկեղծ հաւատքէն բղխած սէրը»--Ա. Տիմ. Ա.5: Հաւատք, յոյս և սէր բառերն են, որոնք մարդուն կեանքին ինքնութիւն և նպատակ կու տան, այլապէս մարդուն կեանքը կը պարպուի իր իմաստէն: «Սէրը՝ որ **կեանքով ու գործով** կ'արտայայտուի, **ծառայութեամբ ու**

**բարիքով** կը մարմնանայ և, ի հարկին, **խաչով կը կենուի** --- **Գարեգին Ա. Կաթողիկոս:** “Սէր” բառը չէ եղած հարոգութիւն համար, այլ՝ կիրարկութիւն:

**Ինչպէս կայ մեռեալ հաւատք, կայ նաեւ մեռեալ սէր:**

Հոգեկա՛ն սիրոյ համար գոյութիւն չունին ժամանակ, տեղ, ազգութիւն, կրօն, գաղափար, վիճակ, տարիք և գեղեցկութիւն: Ներկայ երիտասարդաց միջեւ սէր չկայ, այլ միայն սեռային յարաբերութիւն (յարգելով բացառութիւնները): Կեանքին միակ իմաստութիւնը՝ բարութիւն է և սէր: Եթէ սիրենք մեր թշնամին՝ իր հոգին մեզի աւելի յստակ պիտի ըլլայ և որքան աւելի թափանցենք անոր մէջ, այնքան աւելի պիտի տեսնենք թէ իրաւունք ունի մեր գութիւն, և մեր սիրոյն: Սիրելով մեր թշնամին կը մաքրենք գիտակցութեան մէջ մեր ոգին: Սէրը սիրուողը թափանցիկ կ'ընէ: Եթէ չես հաւատար, փորձէ՛:

Աստուածաբաններ կը հետաքրքրուին Աստուածաշունչի գրականութեան (ակադեմական) վերաբերեալ հարցերով և հեղինակներով, ոչ Աստուածաշունչին պատգամովը:

1. Յիսուս Ինքզինք կը կոչէ **“Աստուծոյ Խօսք”**-ը, “Բանն Աստուծոյ”, ոչ թէ *գրութիւն մը*, այլ *իմաստաբոլոր* և *ապրո՛ղ* Մեկնաբանութիւնը:
2. Ոչ թէ ո՞վ գրած է Ս. Գիրքը, այլ ո՞վ *յայտնաբանած* զԱստուած:
3. Յիսուս Զրիստոս ապրեցաւ որպէս տեսանելի **Աստուածայայտնութիւն և հայելացումը սէր Աստուծոյ:**

Մալքոմ Էֆսի երբ կը հարցուի թէ ի՞նչ է իր ուխտագնացութեան (Մեքֆա) խորագոյն տպաւորութիւնը, ան կ'ըսէ. **“Եղբայրութիւնա՛ր**, ուր զանազան ազգեր, ցեղեր ու գոյներ ամբողջ աշխարհէն կու գան ու կը միանան որպէս **մէ՛կ** հոգի...:

Երբ միլիոնաւոր Իսլամներ հանդերձուած նոյն ճերմակ պատմութեանով և անճանաչելի թէ ով է հարուստը կամ աղքատը, տգէտը կամ ուսեալը: Այդ երեւոյթը կը խանդավառէ Բեզ:

Ազատութիւնն ու Հաւասարութիւնը կը վայելեն Օրէնքին ու Մահմանադրութեան պաշտպանութիւնը, նոյնը կարելի չէ ըսել Եղբայրութեան համար, որովհետեւ ան աւելի հոգեկա՛ն արժէք մը կը ներկայացնէ:

**Եղբայրութիւն** կը նշանակէ՝ բարեկամութիւն, ընկերութիւն, իրարու օգնելու կամեցողութիւն, անձնուիրութեան ոգի և սէր իր ընկերոջ հանդէպ (Զրիստոնէութիւն): **Ազատութեան** գոյութիւնը երաշխաւորող պետութեան մը մէջ ապրող մարդիկ, անպայման Ազատութիւնը պիտի գործածեն ինքզինքնին հարստացնելու և ուրիշները չֆաւորացնելու համար:

Հայոց Եկեղեցին միաբանութիւն ըսելով ուզեց ունենալ եկեղեցիներու միջեւ հոգեւորական հաղորդակցութիւն, փոխադարձ յարաբերութիւն, և

իրարու դիրքին հանդէպ յարգանք, իւրաքանչիւրին համար իւր ջրջանակին և սահմաններուն մէջ ազատութիւն, և ամէնուն վրայ տիրապետող քրիստոնէական սուրբ սէրը:

Հայոց եկեղեցին որքա՞ն յաջողած է այսօր, իր փոխադարձ յարաբերութեամբ և յարգանքով հասնելու Քրիստոնէական սոյն սուրբ սիրոյն:

Պատասխանը ըլլալու է անկեղծ և մեր Յիրոջ Յիսուսի ներկայութեան, որովհետեւ Ան աշխարհի վրայ բոլոր եկեղեցիները կը կոչէ. **«Ի՛մ եկեղեցիս»:**

Մեր հանդէպ դրացիին, թշնամիին կամ Սամարացիին պարտ է ըլլալ նոյնաման սէր: Մերը պէտք է ողջագուրէ և համակէ մարդկային հոգին և էութիւնը, որովհետեւ երբ անձը մեռնի աշխարհի, այդ սէրն է որ պիտի գոյատեւէ:

Յիսուսի ջրթներուն վրայ Աստուած գերազանցապէս ու վեհափառօրէն Հայրութիւն է, որ կը զբաղի նոյնիսկ պարզ ճնճողուկներով: Պետրոս առաքեալ կ'ըսէ. **«Ամէն բանէ առաջ՝ սրտանց սէր ունեցե՛ք իրարու հանդէպ, որովհետեւ**

***Մէրը պատճառ կ'ըլլայ որ ձեր բազմաթիւ մեղքերը ներուիս'--Ա Պետ. Դ.8:***

Հաւատքի և յոյսի բանալին սէրն է, Քրիստոնէութիւնը խարսխուած է սիրոյ վրայ, որովհետեւ Աստուած սէր է: **«Գիտցէ՛ք սակայն, թէ գիտութիւնը կը հպարտացնէ, մինչ սէրը հաւատքը կ'ամրապնդէ»--Ա Կորնթ. Ը.1:** Ստեղծագործութեան և արարչագործութեան ճանաչումն ու Աստուածայայտութիւնը անբաժանելի բացայայտութիւններ են նոյն Արարիչ Աստուծոյ: Աստուած ստեղծեց ամէն ինչ, ոչ թէ աւելցնելու համար Իր փառքը, այլ Մէ՛րը արտայայտելու: **«Ոչինչ տուած կ'ըլլանք մեր Երկնաւոր Հօր. եթէ մեր աւերողչական սէրը չ'նուիրաբերենք Իր տիեզերական փառքին»--Վարդան Ա. Բհնյ. Տիւկերեան:** Մերը կեանքին իմաստն է, ու կեանքը՝ սիրոյ արտայայտութիւնը: Չ օրաւորագոյն սէրը անձնուիրութիւնն է: Մերը նուաճումն է նոյնիսկ մահուան:

Մարգարէութիւնները կը կատարուին, կ'իրականան ու այդպէսով վերջ կը գտնեն, իսկ իրաւ սէրը կը գոյատեւէ յաւիտեան: Մերը հաւատացեալին անհատական և հաւաքական հոգեւոր փորձառութեան առանցքն է: Օրէնքները բրտութեան կը տանին, իմաստութիւնը՝ տրամութեան, իսկ սէրը՝ յաւերժութեան: Մերը մարդկային էութիւնը լեցնող զգացումն է, ազնուացնող ու վեհացնող: Ան կրակ մըն է որ եթէ անով ուրիշները չվառես՝ կը մարի:

***«Մէր անուս Յիսուս,  
Սիրով Բով ճմլեա,  
Սիրա իմ Բարեղէն»--Ս. Ներսէս Ծնորդալի:***

Խաչելութեամբ, Յիսուս Հօր Աստուծոյ սէրը կը գծէ Գողգոթայի վրայ: Աստուծոյ սէրը բառերով չի բացատրուիր, թուանջաններով չի չափուիր, զգացումներով չի թարգմանուիր: Աստուծոյ սէրը նիւթական բան մը չէ, որ վաճառուի և ոչ ալ մասնագիտութիւն մը, որ ուսանելով ստացուի: Անոր ներում շնորհող սէրը, կը յաղթէ բոլոր մեղանշումները մարդ արարածին: Երկու կրակ կար վառուած Մաշտոցի սրտին մէջ՝ սէրը դէպի Աստուած և սէրը դէպի իր ազգը: Երկու ուժեր անդուլ կ'արծարծէին այդ կրակները. մին՝ մտքի խորթափանց լոյսն էր. միւսը՝ սուրբ նուիրում մը դէպի գերագոյն Ճշմարտութիւն: Պօղոս առաքեալ իր "ես"ը կը նմանցնէ խղճալի անյոյս անձնաւորութեան որ կը գոչէ, ըսելով. «Ի՞նչ խղճալի մարդ եմ: Ո՞վ զիս պիտի փրկէ մահուան դատապարտուած այս մարմինէն»--Հռոմ. Է.24: Միայն Աստուծոյ **սէրն** ու **սրբութիւնն** է որ կրնայ ազատել մարդը իր անկումէն:

Դատաստանն ու դատապարտութիւնը այսօրուայ հոգեբանութեան մէջ տեղ չունին, մանաւանդ *Աստուծո՛յ* դատաստանը: Կը նախընտրենք երեւակայել աստուածութիւն մը, որ անցեալը անցած կը սեպէ ու կը ծիծաղի մեր ձախորդութեան և մեղքերուն վրայ:

- 1 Ըստ Աւետաաարանի՝ *Աստուած սէր է:* Եւ սէրը առանց դատաստանի անիմաստ իրողութիւն և պատրանք մըն է:
2. Ծնորհքը իր մէջ կը պարունակէ դատաստան, որ իր լրումին հասաւ Յիսուս Բրիստոսի մէջ:
3. Ծնորհքը այն արարին է, որ Աստուած կը կատարէ մեզ համար, որովհետեւ մարդը անկարող է իրագործել:

Տառապող սէրը հզօրագոյն ուժն է քրիստոնեային: *«Ճանչնա՛ք Բրիստոսի սէրը, որ ոճէ միտքի հասողութենէն վեր կը մնայ, որպէսզի լեցուինք Աստուծոյ ամբողջական լիութեամբը»* --Եփես. Գ.19: *«Մէ՛ջ վերին և ո՛չ ալ ներքին աշխարհները, ո՛չ ալ ուրիշ տտեղծագործութիւն մը կրնայ մեզ բաժնել Աստուծոյ սէրէն, որ մենք ճանչցանք մեր Տիրոջ Յիսուս Բրիստոսի միջոցաւ»*--Հռոմ. Ը.39: Մերն է, որ կը վերափոխէ և բարոյապէս կ'ազնուացնէ մարդը: Աստուծոյ նմանութեան գաղտնիքը՝ Մերն է, գերմարդկայինը, Ճշմարտութեան ճամբան:

Մերն ու յարգանքը, համբերութիւնը, փոխադարձ զիջումները ու հանդուրժողութիւնները կը ստեղծեն անդորր ու երջանիկ բոյն մը: Բրիստոսի սէրն է, որ կը ստիպէ մեզ այսպէս վարուիլ: Բոլոր առաքիներութիւնները սահմանող, դասակարգող, մեծագոյն խորհուրդը **սէրն** է և մնացեալները անոր եղանակաւորումներն են: Յիսուս սիրալիր դուռ մը և գլխասիրտ օթեւան մը կը փնտռէ, որպէսզի Զինք հրաւիրողը երջանկացնէ: **Սիրել**, յանձնաւորութիւն մըն է, այսինքն պարտականութեան ստանձնում: «Սիրել եղբայրը աւելի մեծ է քան մարգարէութեան շնորհը, աւելի բարձր քան առաքելութեան

կոչումը, անելի պատուական Բան մարտիրոսներու պատիւը, և անելի պատուարժան Բան միւս բոլոր առաքինութիւնները»-- **Ս. Յովհան Մանդակունի** (420-490):

Բազմաթիւ քրիստոնեաներ կը սիրեն Քրիստոս մը, որ նկար մըն է լոկ կամ գաճէ արձան: Միրեցէ՛ք այն Քրիստոսը՝ որ է Որդի Աստուծոյ, ու Մարմնացաւ Բեզի և ինծի համար: Մի՛ սպասեր սիրուիլ կրնա՞ս սիրել. սիրէ՛: Մի՛ ակնկալեր առնել կրնա՞ս տալ՝ տո՛ւր: Մի՛ սպասեր փնտուիլ կրնա՞ս փնտռել. փնտռէ՛: Կեանքը խրոխտ ու անողորմ՝ կը սորվեցնէ սոկալ ու արիասիրտ ըլլալ: Հաւատալ ու սիրել այն զոյգ ծառագայթարձակ շողերն են, որոնք կը սրբացնեն մարդը և տեսանելի կը դարձնեն Անտեսանելին:

*«Միրել՝ կը նշանակէ Աստուծոյ նրէնքը լման գործադրել»* --Հոով. ԺԳ. 10: *«Ոմ կը կրտէ, թէ զԱստուած կը սիրէ, բայց իր եղբայրը չի սիրել, ստախոս է»*: *«Ոմ կը զԱստուած կը սիրէ, պէտք է իր եղբայրն ալ սիրէ»* --Ա. Յով. Դ.21: Մենք գիտենք թէ մահէն անցանք դէպի կեանք, որովհետեւ կը սիրենք մեր եղբայրները: Իսկ ով որ չի սիրեր եղբայրը՝ կը մնայ մահուան մէջ: Սերը ճանչցանք անով, որ Յիսուս Իր կեանքը տուաւ մեզի համար: Մենք ալ պարտինք մե՛ր կեանքը տալ մեր եղբայրներուն համար: Խոնարհութիւնը կը նշանակէ սիրել, և սերը կը նշանակէ ծառայել: Ս. Մեսրոպ իր գիւտը ըրաւ հայուն տալու համար այն Գիրքը որ կը սորվեցնէ. *«Միրեցէ՛ք զմիմիանս»*: Հարկ է որ հաղորդուինք այդ **Ոգիին**, և ըլլանք արժանաւոր որդիները մեր նախահայրերուն ու հաւատարիմ ծառաները մեր ազգին:

***Յիսուս խաչեցին, որովհետեւ Ան ուսուց  
ա՛յն տեսակ սէր մը, որ վտանք էր հասարակ մարդու,  
սէր մը որ ամբողջակա՛ն նուիրում և անձ նատուութիւն  
կը պահանջէր:***

Կարմիր բանակին յաղթարջաւ Բնացփին, Համայնավարները կը փնտռէին կայսերական բանակին պատկանող կին մը որ երկու երախաներ ունէր: Իրիկուն մը երիտասարդ կին մը, Նաթալի անունով որ իր տարիքը ունէր, զարկաւ այս կնոջ տան դուռը և հարցուց թէ ինք այս ինչ կի՞նն է: Նաթալին զգուշացուց այս մայրը թէ ինք ճանչցուած է ու այս գիշեր պիտի գնդակահարուի: Նաթալին խրատեց որ փախչի: Մայրը նայեցաւ իր զաւակներուն և ըսաւ. "Ի՞նչպէս":

Նաթալին որ ցարդ միայն թաղին մէջ կին մըն էր, ըսաւ. "Դուն պիտի կարենաս, որովհետեւ ե՛ս պիտի կենամ հոս և յայտարարեմ որ ես ձեռ փնտուած կինն եմ": Մայրը ըսաւ. "Բայց պիտի գնդակահարեն Բեզ": Նաթալին պատասխանեց. "Ես զաւակներ չունիմ":

***Յիսուս նոյնը ըրաւ Գեթսեմանիի պարտէզին մէջ:***

Աշխարհակալներ կը տիրեն իրենց նմաններուն նուաճելով ու յաղթելով զանոնք իսկ Աստուած սիրելով ու ինձ՝զինձ՝ մատուցանելով աշխարհի, և ուղարկելով Իր Միածին Որդին Յիսուս: Ասելութեամբ ջատ քան կորսնցուցած է մարդկութիւնը փոխանակ սիրելով, որովհետեւ ասելութեան կը յանձնուի մարդ արարած *աւելի զգրաւոր*, քան սիրոյ: Որովհետեւ ասելով թշնամիդ անոր ունեցուածքին կրնաս տիրանալ, իսկ սիրելով, բու ունեցուածքդ կը պարտաւորուիս անոր նուիրել: Կեանքի իսկական գեղեցկութիւնն ու զօրութիւնը սիրելու հրաշագործ արտայայտութեան մէջ կը կայանայ. --

1. *«Աէր ու նեցողը համբերատար կ'ըլլայ և քաղցրաբարոյ: Աէր ու նեցողը չի նախանձիր, չի գոռոզանայ, չի հպարտանայ, անպատշաճ վարմունք չ'ու նենայ, միայն ինձ՝զինձ՝ չի մտածէր, բարկութեամբ չի գրգռուիր, չարութիւն չի խորհիր, անխրաւութեան վրայ չ'ուրախանայ այլ՝ ուրախակից կ'ըլլայ ճշմարտութեան: Աէր ու նեցողը միշտ կը զիջի, միշտ կը հաւատայ, միշտ կը յուսայ և միշտ կը համբերէ:*

*Աէրը անվախճան է, մինչդեռ այս կեանքին հետ մարգարէական պատգամները վերջ պիտի գտնեն, հրեշտակներու շեղումներով խօսիլը պիտի դադրի, գիտութիւնն ալ վերջ պիտի գտնէ.»* - Ա. Կորնթ. ԺԳ.4-8:

2. Կարողացած եմ կեանքս նուիրել մարդկային վսեմ նպատակներու:

**«Միրեցե՛ք ձեր թշնամիներ.»** պատուէրը Յիսուսի, ի յայտ եկաւ Պապ Թագաւորին և Մուշեղ Մամիկոնեանի Բրիստոսադաւան նուիրումին մէջ: Այս երկու ասպետական նկարագրի և հաւատքի տէր անձերը, երբ յաղթականօրէն վտարեցին Սասանեան թագաւորը իրենց հայրենիքէն, Պարսից Ճապուհ թագաւորին կանանոցը՝ գերի ինկած էր Հայկական բանակին:

Հայոց Թագաւոր Պապ և Սպարապետ Մամիկոնեան փոխանակ վրէժ լուծելու Ճապուհ թագաւորէն որ բռնաբարած և ապա սպաննած էր Հայոց Փառանձեմ Թագուհին, պաշտպան կանգնեցան հէ՛ք ու թշուառ Պարսիկ փափկասուն տիկիներուն ու վերադարձուցին զանոնք իրենց Արքային, ինչպէս նաեւ բոլոր պատերազմական գերիները: Այսպէս Հայ Բրիստոնեան դարձաւ կենդանի վկայ իր Յիսուսին և Անոր Եկեղեցիին:

Հոգիներէ ներս կը ծիածանէ սիրոյ և ողորմութեան Աստուածը: Միրոյ ծիրը լայն է, սահմանը՝ անծայրածիր: Միրոյ զսպանակն էր որ ոտքի կանգնեցուց Պետրոսը՝ իր ուրացումէն յետոյ: Մարդու ինքնակատարելագործման ուղին կ'անցնի սիրոյ մաքրագտման բուրայով: Կեանքը առանց սիրոյ անվերջ տառապանք է: Յիսուս Բրիստոսի առաքելութիւնը աստուածային սիրոյ գերագոյն արտայայտութիւնն էր հանդէպ տառապակոծ աշխարհի: Աստուածային սիրոյ բխումը խոնարհելով աշխարհ, ստեղծեց մարդը, նոյնպէս մարդկային կեանքը պարտ է դառնալ յառաջդիմական խոյանք մը դէպի արարչական Ակնադրիւրը՝ սիրոյ, յոյսի և հաւատքի տենչով:

Տալն ու տրուելը սիրոյ արտայայտութիւններ են:

1. Հնարաւոր չէ մէկու մը համար աճիլ բարոյապէս և հոգեւորապէս՝ առանց **տալու** շնորհին:
2. Մեր աճումին չափանիշը՝ մեր սիրելուն և տալուն մէջն է:

***«Իրարու բեռը վերցուցէ՛ք, և այդպիսով կաթարեցէ՛ք  
Քրիստոսի սիրոյ օրէնքը»* --Գաղ. 2.2:  
Քրիստոսի Մարդեղութեան խորհուրդը՝  
սիրոյ բացայայտումն է:**

Մեր Տիրոջ Յիսուսի Յարութիւնը աստուածային առատագեղ սիրոյ խորախորհուրդ արտայայտութիւնն է: Մեղքերու թողութիւն իրագործուեցաւ Աստուածային սիրո՛յն պատճառով, վասնզի *«Աստուած այնպէս սիրեց աշխարհը»*: Սիրոյ բոլոր գործերը, սերմնահատիկներ են, որոնք կը պտղաբերին առաքինութեան արգաւանդ հողին ներքեւ: Սիրոյ տառապանքին դիւցազնութիւնն ու յաղթութիւնը Յիսուս Քրիստոսի Անձի՛ն մէջ տեսանելի է: Սիրոյ մարմնացումը՝ մարմնացեալ Քրիստո՛սն է: Մովսէսի Օրէնքի պահուն ամպածորար և կայծակնաբոց գագաթէն կը գոչէր սարսափի անտես Աստուածը: Աշխարհի խոնարհ մտւրին մէջ, կը մնչէ սիրո՛յ շօշափելի՛ Աստուածը: Մինայ լերան գագաթէն կը բացուի փրկութեան ճանապարհը Իսրայէլի ժողովուրդին, իսկ Յիսուս Քրիստոսով, ընդհանո՛ւր մարդկութեան:

Յիսուս Աստուծոյ սիրոյն Մարդեղացումն էր: Աստուծոյ սիրոյն համար որեւէ զոհողութիւն՝ կորուստ չէ այլ մեծագոյն շահ: Աւագ Ուրբաթը գերագոյն ապացոյցն է Աստուծոյ անսահման սիրոյն և մարդոց անյատակ ապերախտութեան, ուրացումին և վատութեան. մարդկային նկարագրին վատթարագոյն գիծերը և Աստուծոյ բնութեան վեհագոյն ճառագայթները:

Գողգոթան միայն աշխարհագրական անուն մը չէ բարձունքի մը, այլ Քրիստոսի Արեամբ ու վկայութեամբ նուիրագործուած դէպք ու ցոլացումը Աստուծոյ սիրոյն: Մարդկային այլազան սերերուն մէջ՝ Աստուծոյ սէրը բաւերով չի բացատրուիր, ծանրութեամբ չի կշռուիր, թուանշաններով չի չափուիր և զգացումներով չի թարգմանուիր, ո՛չ ալ մարդկային բարոյականը վսեմացնող առաքինութեան մը հետ կը բաղդատուի: Այս անզուգական սէրը՝

***հաւատացեալին բոլորանուէր ընծայումն է  
Աստուծոյ առաքելութեան և վկայութեան:***

**Յունուար 1, 2006  
Թորոնթօ**

# “ՕՐԷՆՔԻ ԳԻՐՔԻՆ ՄԷՋ ԳՐՈՒԱԾԸ Ի՞ՆՉ Է, ԻՆՉՊԷ՞Ս ԿԸ ՀԱՍԿՆԱՍ”

--Ղուկաս Ժ.26-42:

1. Մարդիկ փոխանակ մտիկ ընելու, իրենք գիրենք կ'արդարացնեն,  
29
2. Յիսուս մէկ բան կը գնահատէ. “Մակայն մէկ բան պէտք է: Մար-  
իամ լաւ բաժինը ընտրեց, *Յիսուսի՛ մտիկ ընել, զԱյն ճանչնալ* 42
3. Յիսուսի պատուիրանը մեզի. “Գնա՛, դո՛ւն ալ նոյնը ըրէ, 37:

Յիսուս, երկինքէն դրկուեցաւ աշխարհ, որպէս Բացայայտիչը նախորդ մարգարէներու պատգամներուն: Մարդ արարած, որքա՛ն ալ ըլլայ Աստուծոյ դեսպանը և Անոր պատգամաբերը, իր անկատարութեան պատճառաւ, չի կրնար ճշմարտօրէն պատկերել և ըմբռնելի ընել զԱստուած և Անոր հրահանգները:

Օրէնքի ուսուցիչին հարցումը, Յիսուս անպատասխան չի թողուր, այլ նոր հարցումով մը պատասխանեց, ըսելով.

**“Օրէնքի գիրքին մէջ գրուածը ի՞նչ է.  
ինչպէ՞ս կը հասկնաս:**

Որովհետեւ մինչեւ երկնագեղ Յիսուսի Մարդեղացումը, բոլոր ազգերու կրօնական գիրքերը ո՛չ միայն բացատրելի և հասկնալի էին, այլ միայն անգիր արտասանութիւններ և կրկնութիւններ էին, աղօթողներու և քահանաներու կողմէ: Օրէնքը հասկնալ և այդ պատուերներուն իմաստը գործադրել մարդոց մտքէն չէր անցած: Պաշտամունք ըսուածը թէ՛ հեթանոսներու և թէ՛ Իսրայէլի ժողովուրդին մէջ, արջառներու զոհագործութեամբ և անոնց արեամբ մեղէրու քառութիւն ստանալ էր:

Բոլոր ազգերու հաւատքը առ զանազան աստուածներու էր: Նոյնիսկ Հրեաներո՛ւ մէջ, սեփականացուած Աստուած մըն էր, որպէս Իսրայէլի՛ Աստուածը: Մոյն պատճառաւ, Յովնան մարգարէն չի փափակեցաւ երթալ Ասորեստան և իր Հրեայ ցեղի՛ն Աստուածը փարոզել հեթանո՛ս ազգի մը: Աստուած, Աքրահամ նահապետը չէր ընտրած իբր միայն Հրեայ ազգի՛ն Արարիչ Աստուածը, այլ այդ ազգին միջոցա՛ւ ուզած էր ճանչցուիլ նաեւ համա՛յն մարդկութեան:

Հրեաները ստացան Օրէնքն ու ճշմարիտ աստուածճանաչումը սակայն ամէն ջանք թափեցին իրենց տրուած մեծագոյն շնորհը ազգայնացնելու: Ուստի, Աստուած տեսնելով Իսրայէլ ազգին անհաւատարմութիւնն ու ազգայնամոլութիւնը, դրկեց Իր Միածին Որդին Յիսուսը, ըսելով.

***«Կալուածատէր մարդ մը կտր, որ այգի մը տնկեց.***

չորս կողմէն ցանկապատեց, հնձանի համար փոսը փորեց, աշտարակ մըն ալ ջինեց և զայն վարձու տուաւ մշակներու, իսկ ինք ուրիշ երկիր մեկնեցաւ: Երբ այգեկութի ժամանակը եկաւ, իր ծառաները դրկեց մշակներուն մօտ՝ բերքէն իր բաժինը առնելու համար: Մշակները ծառաները բռնեցին, մէկը ծեծեցին, միւսը սպաննեցին, ուրիշ մըն ալ բարկոծեցին: Այգիին տէրը դարձեալ ծառաներ դրկեց, նախկինէն շատ աւելի թիւով, բայց ասոնց ալ նոյնը ըրին: Ամենէն վերջը Իր Արդին դրկեց անոնց՝ մտածելով, «Թերեւս Իմ Արդիէս պատկառին»: Բայց մշակները երբ տեսան Արդին՝ իրենք իրենց ըսին. «Ասիկա է ծառանգորդը, եկէ՛ք սպաննենք զայն, որպէսզի անոր ծառանգութեան տիրանանք»: Աստի այգիէն դուրս հանեցին զայն և սպաննեցին: Եւ Յիսուս հարցուց. «Արդ, երբ այգիին տէրը գայ, ի՞նչ պիտի ընէ այդ մշակներուն:»

Անոնք պատասխանեցին. «Վստահաբար այդ չար մարդիկը չարաչար պիտի սպաննէ և այգին վարձու տայ ուրիշ մշակներու, որոնք բերքի իր բաժինը ժամանակին պիտի տան իրենս»:--Մատթէոս ԻԱ.33-41:

Աստուած Իր Միածին Արդին՝ Յիսուսը չի դրկեց որ ան խաչելութեամբ մեռնի, այլ այգիին բերքէն բերէ: Տէր Յիսուսի խաչելութիւնը, վարձկան մշակներուն անձնասիրութիւնն էր, որպէսզի ուրիշին այգին սեփականացնեն: Հրեաները ամէն միջոց գործածեցին, որպէս զի սեփականացնեն աստուածայտնութիւնը՝ ճշմարիտ աստուածաճանաչումը, նոյնիսկ Անոր Միածին Արդին Յիսուսը խաչամելով և սպաննելով: Սակայն Յարուցեալ Յիսուս, Երկինք համբարնալէն առաջ պատուիրեց Իր առաքեալներուն.

*«Գացէ՛ք ամբողջ աշխարհը և բոլոր մարդոց բարոզեցէ՛ք Աւետարանը: Ով որ հաւատայ և մկրտուի՝ պիտի փրկուի, իսկ ով որ չհաւատայ՝ պիտի դատապարտուի»* --Մարկոս ԺԳ.15-16:

*«Ամէն իշխանութիւն արուեցաւ ինձի երկինքի մէջ և երկրի վրայ: Ինչպէս որ Հայրը զիս դրկեց, այնպէս ալ ես ձեզ կը դրկեմ: Հետեւաբար, գացէ՛ք և բոլոր ժողովուրդները ինձի աշակերտ դարձուցէ՛ք: . . . Անոնց սորվեցուցէ՛ք այն բոլոր պատուիրանները որ ես ձեզի տուի, և ահա միշտ ձեզի հետ պիտի*

**ըլլամ, մինչեւ օշիտարհիս վախճանը» --Մատթէոս ԻԸ.**

**18-20:**

Յիսուս Զրիստոս այսօր ալ կը հարցնէ, ոչ թէ չրեայ կրօնի ուսուցիչներուն, այլ Իր Եկեղեցոյ աստուածաբան կարծուածներուն, բաճաններուն և պատուելիներուն, ու կ'ըսէ անոնց.

**«Իմ Աւետարանիս մէջ, հաւատարիմ օջակերտներուս պատմագրածները ի՞նչ են, ի՞նչպէ՞ս կը հասկնամք և ինչպէ՞ս կը մեկնաբանէք Պատուիրաններս»:**

Անկեղծ և գիտակից հաւատացեալի մը պատասխանը ի՞նչ կը կարծուի թէ պարտ է ըլլալ: Երբ կարդանք Յիսուսի Եկեղեցոյ պատմութիւնը, հոն պիտի տեսնենք առաքեալներու նահատակութիւնը, մինչեւ 70 թուական: Այդ թուականէն մինչեւ 120 թուական, Եկեղեցական պատմագրութիւն չի կայ: Իսկ 125-էն յետոյ կը տեսնենք Եկեղեցական հայրերը, որոնք աւելի իմաստասիրական հաւատացեալ վարդապետներ դարձած են, որովհետեւ ջանացած են Յիսուսի հաւատքը ապացուցել **տրամաբանութեամբ**: Մինչդեռ Յիսուսի համեստ առաքեալները և Անոր օջակերտները վկայեցին անձնուրացութեամբ, աստուածայայտնութեամբ և նահատակութեամբ:

Խոր վիշտով, ցաւով և համեստօրէն կը գրեմ, որ սկսեալ Երրորդ դարէն մինչեւ 18 դար, Զրիստոնեայ ազգերն ու հաւատացեալ ժողովուրդները իրար հալածեցին, որովհետեւ Յիսուս Զրիստոսի Պատուերները, փոխանակ սիրո՛յ և եղբայրական հոգիով մեկնաբանելու, ջանացին բացատրել *խմտտասիրակա՞ն* և *վարդապետակա՞ն* սեփականացուած իմաստով: Արեւմտեան և Արեւելեան Պատրիարքութիւնները ու Աղեփսանդրիոյ աստուածաբանական ճեմարանին մեծահոգի Պատրիարքութիւնը փոխանակ Յիսուսի սիրո՛յ հոգիով վերաբերուելու իրարու հետ, դարձած էին իրարու աններող մրցակիցներ և զիրար հալածողներ:

Որպէս կենդանի օրինակներ, կ'ուզեմ յիշել Պոլսոյ երկու հաւատասէր պատրիարքները. առաջին, Օհան Ոսկեբերանն, ու երկրորդ, Նեստոր պատրիարքը: Ինչո՞ւ այսպիսի կարո՞ղ և անձնուրաց Յիսուսի հաւատացողներ գեղծարարուէին, անարգուէին ու Եկեղեցիէն վտարուէին որպէս հերետիկոսներ ու մեռնէին: Մեզի, չայերուս աւելի մօտ Ղազար Փարպեցի, Արարատ նահանգի Փարպի գիւղէն ու կանուխէն որբացած ու որդեգրուած Մամիկոնեանց Բով գուցէ որպէս գերի կամ ծառայ: Իր բնիկ ուշիմութեան և ուսումնասէնչ ջանքերուն պատճառաւ ուշադրութիւնը կը գրաւէ Ադան Արծրունիին և Մամիկոնեան ու Կամսարականի զաւակներուն հետ ինքն ալ կ'ուսանի: Աւելի ուսում ստանալու համար Գիւտ կաթողիկոսի հրամանաւ Հոռոմ կը դրկուի:

Ղազար երկար տարիներ դեբերած է Հոռոմայ երկիրը ու բազմաթիւ

յունարէն գիրքեր հաւաքած: Ան հետեւած է հոետորութեան և ստացած "Ճարտասան" տիտղոսը: Ամուսնացած ու զաւակներ ունեցած է: 486-ին Վահան մարզպան ելաւ Փարպեցին փնտրելու, և զայն գտաւ Սիւնեաց աշխարհին մէջ ու բերաւ իր տունը: Յաջորդ մէկ երկու տարիներուն է, որ Վահանի յանձնարարութեամբ ան զբաղեցաւ իր պատմութեան շարադրութեամբ:

Էջմիածին վանքին վանահայրը եղած է այնուհետեւ, մինչեւ անկէ հալածուիլը: Փարպեցին, պերճախօս քարոզիչ մը ըլլալով հանդերձ, կրթական կարող մշակ մըն էր: Դպրեվանքին ստացած արտաբոյ կարգի ժողովրդականութիւնը, Ղազարի հակառակ եղող արեղաներու նախանձը կը ջարժէ ու զայն վարկաբեկելու համար ամէն ջանք կը բանեցնեն:

1. Հաւատքն ու բարոյականը կը խծքծեն:

2. "Աղանդաւոր" անուն մը կը բաղկնեն:

3. Երբ ան կաթողիկոսին կը դիմէ. «Ես բեզ տեսնելու անգամ չեմ

համարձակիր, կը պատասխանէ ան որ չ'ըլլայ թէ մէկը իմանալով, զիս ալ բեզի հետ թաղէ»--**Բաբգէն կաթողիկոս:**

**Օրմանեան** համոզիչ կերպով կը փաստէ թէ Բաբգէն կաթողիկոսն ինքն էր Ղազարի ամենէն ռիւերիմ թշնամին, որովհետեւ ապահովապէս Փարպեցին հզօր մրցակից մը եղած էր Բաբգէնին իբրեւ կաթողիկոսական թեկնածու և թէ Բաբգէն ընտրութեան մէջ անոր վրայ յաղթանակ տանելէն վերջն ալ չէ ուզած անոր օձիքը թող տալ **(Անդ. էջ 482, 484)** : Բայց անշուշտ արդարացի պատրուակ մըն ալ պէտք էր կաթողիկոսին ձեռքը, որպէսզի անոր դէմ յաջողէր, մանաւանդ թէ կարենար Վահան մարզպանն ալ իր կողմը ջանիլ և կամ գոնէ Ղազարին պաշտպան կանգնելէ հրաժարեցնել:

Ղազարի հակառակորդները զայն հանեցին իր պաշտօնէն մերկ և թշնամանօք, զրկելով ամէն ունեցածէն՝ զոր մանկութենէն ի վեր ստացած էր, ու մինչեւ անգամ իր յունարէն գիրքերը չտուին անոր, թէեւ իրենք ալ անկարող էին օգուտ փաղել անոնցմէ, և այն թանկագին ձեռագիրները կը մնային անկիւն մը նետուած՝ կեր ըլլալու ցեցերուն:

Խեղճ գիտնականը հալածուած, գուցէ Հայաստանի սահմաններէն ալ արտաքուտած ապաստանեցաւ Ամիդ: Փարպեցին իր կրած վիշտերէն տառապահիւծ, վերադարձէն ետք չէ կրցած երկար ապրիլ:

Հոգեզգօն ֆրիստոնեաներ, տեսնելով չորրորդ դարու անսուրբ **խառնուրդը Հեթանոսութեան և Քրիստոնէութեան**, ընդվզեցան: Ընկերութեան մէջ մնալով, կարծեցին թէ, չեն կրնար անաղարտ պահել իրենք գիրքնք, ոչ ալ ընկերութիւնը բարեկարգել. այդ պիտի նշանակէր հոսանքն ի վեր թիավարել: Ուստի միակ տրամաբանական ելքը տեսան Եկեղեցական ընկերութենէն հեռանալ և առանձինն ապրիլ: Այս որոշումը ո՛չ ֆրիստոնավայել է ու ո՛չ Քրիստոսահաճոյ: Կեանքը, անապատին մէջ, նո՛յնն էր յաւէտ,

լծացած ու միապաղաղ: Անապատը կարծես բոլոր հաշիւները աշխարհին հետ փակած ու յաւէտ մեկուսացած էր իր անկիւնը: Իրական ճգնաւորութիւնը վաղ Միջնադարին մահացած էր արդէն, երբ մարդիկ աւելի նախապատուութիւն տուին աշխարհէն և անոր պատասխանատուութիւններէն փախչելու ցանկութեան, քան հոգեկան կատարելութեան իտէալին. երբ անհոգ ու հանդարտ և ծոյլ ապրի՛լը կարգախօս դարձաւ, քան պայքարիլը չարի ոյժերուն և մարմնական ցանկութիւններուն դէմ:

Աստուծոյ ուզածը, ո՛չ թէ մեր աշխարհէն բաժնուի՛լն է, այլ Անոր **ծառայե՛լ** է նման Աննա մարգարեւոհիի--Ղուկ. Բ.25-36: Կատարելութեան մղումը մարդուն մէջ ծնունդ կ'առնէ ինքնավերլուծութեամբ ու ինքնաճանաչումով նման "Անտոակ "Որդիին": Զրիստոնէական կեանքը ճգնաւորութիւնը **ԶԷ՛**, այլ Աստուծոյ տուած տաղանդները գործածութեան դնել:

Ներկայ Եւրոպական ազգերու աշխարհագրական պատկերը (հարտէսը) 1970-թուականէն առաջ գոյութիւն չ'ունէր: Դիտենք Զրիստոնէայ կոչուած Եւրոպական երկիրներու վիճակը:

1. Հարիւր Տարուայ Պատերազմը Անգլիոյ և Եւրոպական ցամաքամասին, որ վերջացաւ 1337-1453-ին Անգլիոյ ուժերուն վտարումով Եւրոպական ցամաքէն:
2. 1453-թուականին, Արեւմտեան Պապական Եկեղեցւոյ գծտութեան պատճառաւ, Եւրոպական Կաթոլիկներ օգնութեան չփութացին Բիւզանդիոնի Կայսրութեան ու Օսման թուրքերը գրաւեցին Արեւելեան Զրիստոնէական գլխաւոր և Եւրոպան պաշտպանող պարիսպը: Հետեւաբար բոլոր Արեւելեան Եւրոպան մինչեւ Վիեննայի սահմանները, դարերեով մնացին Իսլամ կռունկին տակ:
3. Եւրոպայի եկեղեցական ձաւատաֆննութիւնը որ սկսաւ որպէս *հալածատն* հերետիկոսներու դէմ 1184-ին, դարձաւ արիւնալի ու անողոք սպանդ ու վերջ գտաւ 1820-ին: Հաւատաֆննութիւնը, հերետիկոսները դատելու և պատժելու պաշտօն ունեցող կրօնական աններող ժողով մըն էր: Ոչինչ բան բաւական էր, մէկու մը աղանդաւորութեան մէջ մեղադրելու և այրելու համար:  
1184-ին հաստատուած, այս ժողովը գործեց նաեւ Ֆրանսայի հարաւային կողմը. ԺԳ. դարու Իտալիոյ և սպանիոյ մէջ ալ հաւատաֆննական ատեաններ կային:
4. Նաբոլէոն դադրեցուց հաւատաֆննութիւնը 1808-ին, սակայն 1814-ին վերստին հաստատուելով, 1820-ին վերջնականապէս ջնջուեցաւ: Պատմաբաններ կը կարծեն թէ մօտ 5,000,000-15,000,000 միլիոն մարդիկ սպանուած են հաւատաֆննութեան դարերուն:
5. Միջնադարու Ս. Օգոստինոս եղած է անառարկելի հեղինակութիւն կրօնի և փիլիսոփայական հարցերուն: Միջնադարու եկեղեցին վաւերացուց և

հաստատեց հաւատաբանութեան ջարդերը: Բարին, ազնիւն ու պատուականը կարելի է ստիպել, բայց երբեք բռնութեամբ, հարկադրութեամբ կամ ճնշումով կիրարկուելու է: Ճնշումով և պարտադրութեամբ ստեղծուած բարիք մը կը դառնայ անհանդուրժելի և բիրտ իշխանութիւն:

6. Ա. Օգոստինոս սիսալ և ծուռ մեկնաբանեց Յիսուսի "ստիպել" խօսքը:--Ղուկ. ԺԴ.24 համարին, եղիա մարգարէին--Դ. Թագ. ԺԸ.40, և Պօղոս առաքեալի դարձը--Առաք. Թ.1-18: Վերոյիշեալ պատճառաբանութեան համար, Միջնադարու եկեղեցին վաւերացուց և հաստատեց հաւատաբանութեան ջարդերը: Ա. Օգոստինոս դրած եղաւ **արդար պատերազմի** հիմը:

7. Հոլանտայի մէջ Աստուծոյ ժողովուրդին կրած չարչարանքը, աւելի դառն և կրօնական կոիւները աւելի երկարատեւ եղան՝ Բան ուրիշ որեւէ երկրի մը մէջ: Այս երկրին մէջ բազմաթիւ այր մարդիկ և կիներ և տղամներ գլխատուեցան, խեղդամահ եղան, այրեցան և ողջ ողջ թաղուեցան:

1555 թուականին Ալվէի անօրէն դուբսը, հինգ տարուան մէջ տասնըութը հազար անձ սպաննել տուաւ հրապարակաւ, խիստ զարհուրելի չարչարանքներ ու տանջանքներ տալով: Ծառ անգամ այս ճշմարտութեան նահատակները՝ դեռ այրելու տեղը չտարուած՝ բերանին գամեր կը դրուէր կամ՝ լեզունին կը կտրուէր, որպէսզի կարող չըլլան բազմութեան առջեւը խոստովանելու իրենց ուրախութիւնը և ճշմարտութեան մէջ հաստատ մնալնին:

Մօտ հարիւր հազար անձինք ձգեցին փախան Հոլանտայէն, դէպի Ամերիկա իրենց վրայ սպաննացող աղետալի վիճակէն ազատ մնալու համար:

#### 8. **Ֆրանսայի Ա. Բարթոլոմէոս Օրը**

1561-ին Ֆրանսայի Հիւկոնոթները (Կալվինական) ունէին 2,150-է աւելի անուանեալ անդամներ ու 400,000-է աւելի հետեւորդներ: Թէեւ փոքրամասնութիւն մը կը կազմէին Ֆրանսայի մէջ, սակայն դիւանագիտականօրէն զօրաւոր դիրքեր ունէին:

Ա. Բարթոլոմէոսի Օրը Օգոստոս 24, 1572 սկսաւ աննախընթաց վայրագութիւնը գազանային նախճիրին ուր հարսանիքի հրաւիրուած էին երկրին գլխաւոր մեծերը Կաթողիկ իշխաններու դաւադրութեամբ: Եկեղեցւոյ զանգակները երբ սկսան դողանչել, Կաթողիկներ՝ ճերմակ թաշկինակը փաթթած իրենց թեւին սկսան սպանդի, բոլոր Բողոքականները: Փարիզի մէջ սպաննուեցան մօտ 8,000 Բողոքական և ուրիշ վայրերու մէջ ալ 20,000:

30,000 Բողոքականներ վերադարձան Կաթողիկէ հաւատքի ու մօտ 50,000--250,000 գաղթեցին հիւսիսային Ամերիկա: Գազանային այս շաւտաբանական նախճիրները Զրիստոսի Եկեղեցւոյ մէջ, ոչ թէ աններելի են, այլ կը շարունակուին ցարդ Բաղաբանութեան անուան տակ:

Ներկայիս եւս, կը շարունակուի զԱստուած և Յիսուս Զրիստոսի

Եկեղեցւոյ սեփականութիւնը, ազգայնացնելով Եկեղեցիները, ազգայի՛ն և ցեղային, վարդապետակա՛ն և աւանդակա՛ն, ու յարանուանակա՛ն անյարմար անուններով: Այսօր եւս, Յիսուս կը հարցնէ մեզ բոլորիս,

**“Աւետարանին մէջ գրուած Իմ Պատուիրաններս  
ինչպէ՞ս կը հասկնաս»:**

Մեր Տիրոջ Վերջին և նոր պատուիրանը ի՞նչ էր: Կարդանք միասին:

*Նոր պատուիրան մը կու տամ ձեզի. «Միրեցէ՛ք իրար:  
Ինչպէս էս ձեզ սիրեցի՝ դուք ալ իրար սիրեցէ՛ք:  
Չեր իրար սիրելո՛ւմ է որ մարդիկ պիտի գիտնան, թէ  
դուք Իմ աշակերտներս էք»--Յովհաննու ԺԳ.35:*

Ի՞նչ է մեր դիրքը, ի՞նչ պարտի ըլլալ մեր վարմունքը, հանդէպ բոլոր անոնց որոնք կը հաւատան ու կը սիրեն Փրկիչ Յիսուսը մեզմէ տարբեր ձեւով: Ամէն անձ, ըլլայ այր կամ կին, իր կենակիցը սիրելու և հաճելի ըլլալու ձեւ մը ունի: Մէկը համով կերակուրներ պատրաստելով, ուրիշ մը տունը մաքուր պահելով, ուրիշ մը միասին պտոյտի երթալով եւլն: Մակայն առաջին քայլը, ճանչնալ է թէ իր սիրելին ինչէ՞ կ'ախորժի: Մարդ երբ կը սիրէ անձ մը, ոչ թէ ի՛ր կամքը կը փափաքի կատարել, այլ իր սիրածի՛ն կամքը:

Յիսուս չ'ըսաւ իրար սիրեցէք ինչպէս որ կ'ուզէք, այլ Ան ըսաւ.

***«Միրեցէ՛ք իրար: Ինչպէս էս ձեզ սիրեցի՛»***

Օր մը Յիսուսի աշակերտներէն երկու եղբայրներ՝ Յովհաննէս և Յակոբոս, կուգան իրենց Վարդապետին ու կ'ուզեն պաշտպան կանգնիլ Անոր: Իրենց հարցումը կ'ըլլայ. «Տէ՛ր, կ'ուզե՞ս ըսենք որ երկինքէն կրակ տեղայ և սպաննէ Մամարացիները, ինչպէս Եղիա ըրաւ»: Յիսուս կը դառնայ և կը յանդիմանէ զիրենք, վստելով.

***«Չէ՛ք գիտեր թէ ի՛նչ տեսակ հոգիի կը պատկանիք:  
Որովհետեւ մարդու Որդին չեկաւ մարդիկը  
կորսնցնելու, այլ՝ զանոնք փրկելու»--Ղուկաս Թ.54:***

Երեք տարիներ այս երկու եղբայրները ապրեցան իրենց Վարդապետ Յիսուսի հետ, տեսան Անոր կատարած հրաշքները, սէրը հանդէպ մեղաւորներուն և Զինք անարգողներուն, սակայն այս եղբայրները չի հասկցան ու չի ճանչցան Յիսուսի սէրն ու ողորմութիւնը հանդէպ մեղաւոր մարդկութեան:

Յիսուսի հոգեկան տառապանքն ու ցաւը, ո՛չ թէ Անոր Խաչելութեան մէջն էր, այլ Զինք չհասկնալն ո՛ւն մէջ: Յիսուս երբեք չլացաւ Իր խաչելութ-

եան պահուն, այլ Ան լացաւ երկու անգամներ: Մին Իր բարեկամ Ղազարոսի գերեզմանին ու երկրորդ երբ կը մօտենար Երուսաղէմի ու համա՛յն չրեաներ զինք ողջունեցին որպէս օծեալը Դաւթի որդի: Այդ ազգակիցներու մեծաստանք իրախճանքի և բերկրութեան մէջ, Յիսուս փոխանակ ուրախանալու և ցնծալու սկսաւ լալ և հառաչել, ըսելով.

*«Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, որ կը կոտորէիր  
մարգարէները և կը բարկոճէիր Աստուծոյ բեգի  
դրկած մարդիկը, բանի՛ անգամ ու զեցի որդիներդ  
հաւաքել, ինչպէս հաւը իր ձագերը կը հաւաքէ  
թեւերուն ասկ, բայց դո՛ւմ, Երուսաղէմի բնակիչներ,  
չուզեցիք: Ահա՛ «աւերակ պիտի ըլլայ ձեր տունը»:  
Բայց կ'ըսեմ նաեւ, ա՛յ պիտի չաճեսնէք զիս, մի՛նչեւ  
որ ըսէք, «Սրհնեալ ըլլայ ա՛ն որ կու գայ Տիրոջ  
տնու նով»--Մատթէոս ԻԳ.37-39:*

Տէր Յիսուսի մեծագոյն վիշտն ու կակիծը, Աստուծոյ ընտրած ժողովուրդին անհաւատութիւնը, դրամասիրութիւնը և փառասիրութիւնն էր: Որուն համար մեր Տէրը Յիսուս լացաւ:

Ի՞նչ է Ի՛ր եկեղեցիին դերը այսօր: Արդեօք եկեղեցիները կ'ուրախացնեն իրենց Տէրն ու Ֆրկիչը, թէ կը յուզեն ու արցունքահոս աչքերով կը նայի մեզի ու կ'ափսոսայ, որ մենք եւս ուրացած ենք Ձինք մեր աշխարհասիրութեան պատճառաւ:

*Նախապաշարեա՛լօրէն կը ճանչնանք Ձինք,  
թէ փորձարարք և անկեղծօրէն:*

**Ապրիլ 24, 2006**  
**Թորոնթօ**

## **ԱՃԽԱՐՀ ԵՐԿՐԱԳՈՒՆԳԸ ՏԻՐԱՊԵՏԵԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԲՈՆԱԿԱԼ ԵՒ ՇՈՒԱՅՏ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ**

Արարիչ Աստուծոյ ստեղծած ու գետերով ու լիճերով զարդագանդակած և մարդկային բնակչութեամբ աճող աշխարհ մոլորակը, ունեցած է բազմաթիւ բունակալ հեշտամուլ և ցոփ թեկնածուներ: Վերոյիջեալ թեկնածուները տիրել փափաքած են այս շնորհալի աշխարհին, նենգութեամբ, դաւաճանութեամբ և բունատիրութեամբ:

Աշխարհակալ Բաբելոն, ուզեց կշտացնել և հագեցնել իր փառամուլութիւնը: Ասորեստանի կայսրութիւնը փափաքեցաւ մարդկութիւնը իրեն ենթարկել: Յոյն աշխարհակալներ, իրենցմէ տարբեր ցեղերն ու ազգերը կը կոչէին բարբարոս ու վայրենի: Հռոմայեցի զեխ ու ցոփ կայսրեր, զէնքի բունութեամբ ուզեցին կոչուիլ աստուածներ: Վերոյիջեալ "մեծեր", "հսկաներ", պարծենկոտներ և յոխորտացողներ, բոլորն ալ անհետացած ու կորսուած են աշխարհ մոլորակէն: Անոնք այսօր կը յիշուին միայն պատմութեան էջերուն մէջ: Ներկայիս չկայ ո՛չ մէկ անձ, որ կոչէ ինքզինք Բաբելոնացի, Ասորեստանցի, Բիւզանդացի կամ Հռոմայեցի:

Վերոյիջեալ պարծենկոտներու և նենգամիտ տիրապետութիւն ցանկացողներուն մէջ, գտնուեցաւ իրական ու ճշմարիտ Մեծ ու վսեմափայլ Անձ մը, որուն Մարդեղացման, Աստուծոյ հրեշտակներն անգամ չկրցին լռել ու իրենց երկնային զօրքերու միասնականութեամբ տաղերգեցին ըսելով.

*«Մի՛ վախենա՛մ, ձեզի աւետիս մը պիտի տամ, որ ամբողջ ժողովուրդին մեծ ուրախութիւն պիտի պատճառէ: Այսօր, Դաւիթի Զադաբին մէջ ձեր ֆրկիչը ծնաւ, որ Օծեալ Տէրն է: Հետեւեալը ապացոյց ըլլայ ձեզի. հոն մանուկ մը պիտի գտնէ՛ք՝ խանձարուրով փաթթուած և մսուրի մէջ դրուած:*

*Էւ յանկարծ այդ հրեշտակին միացաւ երկնաւոր զօրքերու բազմութիւն մը, որ կ'օրհնաբանէր զԱստուած, ըսելով.*

*«Բարձու նմներու ն մէջ Աստուծոյ փա՛ռք,  
խաղաղութի՛ւն երկրի վրայ և մարդոց միջեւ  
հաճութիւնս--Ղուկաս Բ.10-15:*

Աշխարհային ամբարտաւան բոլոր թեկնածուներու մէջ գտնուեցաւ միայն մէկ Մարդեղացեալ ինդարկու, որ արժանի էր կոչուելու.

**«Ճամբան, Ճշմարտութիւնը և Կեանք»:**

Նախորդ բոլոր խնդրարկու թեկնածուները գաղտնօրէն երկրպագած էին Սատանային որպէսզի ստանան անձնասիրութեան և հեշտամոլութեան փառապակը: Սատանային երկրպագուներուն մէջ չգտնուեցաւ ո՛չ իսկ մէկ թեկնածու, որ սէր ու ողորմութիւն յայտներ աստուածապատկեր մարդ արարածին: Բոլորն ալ, մեծութեան դիմակի ներքեւ, նենգամիտ դաւաճաններ էին, որոնք սիրեցին միայն դրամն ու ժամանակաւոր փառքը: Ինչո՞ւ, որովհետեւ իրենց երկրպագած Սատանան, իրենցմէ շատ աւելի չարամիտ և անհաւատարիմ դաւաճա՛ն մըն է: Տէր Յիսուսի վկայութիւնը Սատանային նկատմամբ.

*«Եթէ Աստուած ըլլար ձեր Հայրը, բնականաբար պիտի սիրէի՞ք զիս, որովհետեւ ես Աստուծմէ ելայ և եկայ: Ես ինձմէ չեկայ, այլ Անհիկա դրկեց զիս: Ինչո՞ւ խօսքս չէ՞ք հասկնար: Անոր համար՝ որ չէ՞ք կրնար մօտիկ ընել: Դուք ձեր հօր Սատանայի՛ն զաւակներն է՞ք և անոր ցանկութիւնները կատարել կ'ուզէ՞ք: Անհիկա սկիզբէն մարդասպան էր և Ճշմարտութեան կողմնակից չէ եղած բնաւ, որովհետեւ անոր մէջ Ճշմարտութիւն չկայ: Երբ սուս խօսի՝ իր նկարագիրը ցոյց կու տայ, Բանի որ ստախօս մըն է և սուտին հայրը: Իսկ որովհետեւ ես Ճշմարտութիւնը կը խօսիմ՝ չէ՞ք հաւատար ինձի: Չեզմէ ո՞վ կրնայ ամբաստանել զիս ռեւէ մեղքով: Իսկ եթէ Ճշմարտութիւնը կը խօսիմ, ինչո՞ւ չէ՞ք հաւատար ինձի: Ով որ Աստուծմէ է Աստուծոյ խօսքերը մօտիկ կ'ընէ, իսկ դուք որովհետեւ Աստուծմէ չէ՞ք, Անոր խօսքերը մօտիկ չէ՞ք ընել»--Յովհաննէս Ը.42-47:*

Ո՞վ կը կարծուի ըլլալ այս երկնառափ Մարդեղացեալը: Մարդեղացեալը՝ Իր կենսասէր ներկայութեամբ, գարուն բերաւ, եղբայրութիւն բերաւ, մարդկային անապատ երազտութեան: Յիսուս բացաւ զոհողութեան գերագոյն ճամբան, արիւնի ու Գողգոթայի: Մարդեղեալ Բան Աստուծոյին հանդիպող անձ մը կը ստանայ նոր բնութիւն և նոր հասկացողութիւն:

Աստուած եղած էր *ըսկէ*, եղած էր *ձայն*, եղած էր *երևում*: Զրիստոսով՝ Անոր Մարդեղութեամբ Ան *“եղաւ Մարմին”*: Զրիստոսի Մարդեղութեամբ (Անոր մարմնաւոր շրջանին՝ կրած մարդկային նեղութեան փորձութեամբ), Յիսուս մարդկութիւնը (մարդկային դիւրաբեկութիւնը) ներկայացուց չա՛յր Աստուծոյ:

*Տրովհետեւ այս նորոգութիւնը կրա գայ Աստուծմէ, որ*

*Քրիստոսի միջոցաւ մեզ Իրեն հետ հաշտեցուց և նաեւ պաշտօն տուաւ մեզի՝ ուրիշներն ալ հաշտութեան բերելու: Այսինքն, Աստուած Ինքն էր որ Քրիստոսի միջոցաւ աշխարհը հաշտեցուց Իրեն հետ, անյիշաչար գտնուելով մարդոց մեղքերուն հանդէպ, և մեզի պաշտօն տուաւ՝ որ այս հաշտութիւնը պատգամենք՝ բոլոր մարդոց» --Բ.Կորնթ. Ե.18-19:*

*«Այժմ Քրիստոս իր մարդեղութեամբն ու մահուամբը ձեզ հաշտեցուց Աստուծոյ հետ, որպէսզի դուք անոյ ներկայանաք մահուր, անքիծ և անարատ»--Կողոս. Ա. 22:*

Քրիստոնէական կեանքին էութիւնը մշակումն է Աստուծոյ հետ նոր հաղորդակցութիւն մը, որ մեզի փարոզուեցաւ Քրիստոսի Մարդեղութեամբ: Մէրն է ակունքը Քրիստոսի Մարդեղութեան: Սուրբ Ծնունդը տօնն է Աստուծոյ Որդւոյն մեծաբանչ Մարդեղութեան: Քրիստոնէութիւնը Յիսուսի Մարդեղութեան, և մարդու առաւել մարդացման աստուածայայտնութիւնն է: Ան միայն խօսքեր չարտաբերեց, այլ Ի՛նք եղաւ Աստուծոյ խօսքը: Յիսուս Քրիստոսի Մարդեղութեամբ՝ Աստուած ներկայ եղաւ մարդուն մէջ, ուստի կրնայ ներկայ ըլլալ բոլ և իմ մէջն ալ:

*«Զգոյ՛ջ եղէ՛ք, որ ռեւէ մէկը ձեր միտքը չգրաւէ իմաստասիրական տեսութիւններով և խաբէրայական սին խօսքերով, որոնք մարդկային աստութիւններու և բնութեան ոյժերուն վրայ կը հիմնուին և ո՛չ թէ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ վարդապետութեան վրայ: Որովհետեւ մարդացած Քրիստոսի մէջ կը բնակի աստուածային բնութեան ամբողջ լիութիւնը»--Կողոսացիս Բ.8-9:*

Կեանքի ու պայքարի հերոսական ուղին Յիսուս Քրիստոսի ճանապարհն է: Ան ժամանակաւորը կամրջեց Յաւիտենականին հետ, ու մարդկային գիտակցութիւնը միաձուլեց աստուածային գիտակցութեան հետ: Համայնա-վար Յեղափոխութեան ժամանակ, հաւատացեալներ կորսնցուցին հսկայ մայր տաճարներով Յիսուսը, գեղեցիկ ճարտարապետութեան Յիսուսը, երաժշտական ծիսակատարութեան Յիսուսը, ու գտանք երեւան հանեցինք խոցելի՝ Յիսուսը այնպէս ինչպէս մենք վիրաւորելի ենք: Մենք գտանք անարգուած Քրիստոս մը, գտանք Մեսիայ մը որ մինակ մնացած էր, չունէր բարեկամներ ինչպէս մենք:

1. Աստուած կը փութայ երբ մարդկային օգնութիւն չիկայ:
2. Ան փութորիկին կեդրոնը կայնած է»:
3. Յիսուս, կրօնական բազմաթիւ *հաւատամքները*: Բանդեց, օրէնքները վերի-

վայր դարձուց, *հարացած* սրտերը տակնուվրայ ըրաւ որպէսզի ցանէ կենաց սերմերը:

4. Ան չվախցաւ ոչ տաճարէն ու ոչ ալ քահանայապետներէն: Յիսուս Ի՛նքն է Ճշմարտութիւնը, Ճամբան և Կեանքը:

### **Ո՞վ է Յիսուս:**

Այս հարցումը ոչ աստուածաբանօրէն, ոչ պատմականօրէն և ոչ իմաստասիրականօրէն կը պատասխանուի: Պատասխանը կու գայ Մատթէոսի Աւետարանին ԺԱ.27-30-րդ համարներէն ուր կ'ըսէ.

*«Հայրս ամէն ինչ տուած է ինձի, և ոչ ոք կը ճանչնայ Որդին՝ բացի Հօրմէն, և ոչ ոք կը ճանչնայ Հայրը՝ բացի Որդիէն, կամ բացի անկէ՝ որուն յայտնելու զէ Որդին:*

*Ինձի՛ եկէ՛ք դուք բոլորդ, յոգնածներ և բեռնաւորուածներ, և ես հանգիստ պիտի տամ ձեզի: Զեր վրայ առէ՛ք իմ լուծս և ինձմէ սորվեցէ՛ք, որովհետեւ հեզ եմ և սրտով խոնարհ, և դուք ձեր հոգեկան հանգստութիւնը պիտի գտնէ՛ք: Թանհ իմ լուծս դիւրաւ տանելի է և բեռս՝ թեթեւ:*

**Հաւատա՛ք առ Աստուած յայտնութիւն է ու ո՛չ մտային մարզանք: Խորհուրդ խորին, անհաս Անսկիզբ:**

Փարիսեցի Պօղոս ուսած էր իր օրուայ աստուածաբանական բարձրագոյն վարժարանը՝ Գամաղիէլ վարդապետին ոսկերուն: Պօղոս, շրջանաւարտ ըլլալէ յետոյ, ի՞նչ իրագործեց որպէս կրօնական յաջողութիւն և պատիւ: Ան սկսաւ հալածել Յիսուս Բրիսստոսի հետեւողները: Դատապարտեց ոմանք բանտի, աքսորի և չարչարանքի: Պօղոս ա՛յնքան յառաջացաւ հալածանքի և ատելութեան մէջ, որ օրուան քահանայապետը, զինք կարգեց հաւատաւնիչներու մեծաւորը: Սոյն բարձրագոյն աստիճանին մէջ իսկ, անոր սիրտը խաւա՛ր էր և մութ: Իր ընկերները կը նախանձեփին իր յաջողութիւններուն, իսկ ինք կը տառապէր հոգեկան անստուգութեան մէջ:

Պօղոս կը տառապէր ու իր աստուածաբանական ուսումնասիրութեամբ չէր կրցած գիտնալ և ըմբռնել թէ Յիսուսը սիրողներ և Անոր պատուէրները կատարողներ, ինչո՞ւ սիրով ու վեհանձնութեամբ, չեն հայհոյեր զիրենք հալածողները, այլ կ'օրհնեն զանոնք և եթէ կարելի է, պատրաստ են օգնել նոյնիսկ իրենց հակառակորդներուն: Պօղոսի սասակագոյն հարուածողները, Յիսուս Բրիստոսի հաւատացող իր ազգակիցներն էին: Անոնց ապտակները, ո՛չ թէ թշնամական հայհոյանքներ էին, այլ անկեղծ և սիրոյ մարլթանքներ

դէպի գիրենք չարչարողներուն և ներումի աղօթքներ, որպէսզի Աստուած ներէ՛ անոնց որովհետեւ անգիտակցաբար կը հալածեն գիրենք:

Յիսուս կը դիտէր Իր աշակերտները և անոնց կրած զրկանքն ու հալածանքները: Որովհետեւ Եկեղեցիին հալածանքները պիտի դառնային հրաշադեղ սպեղանին, մահուան հրեշտակ՝ Սողոսին: Նաեւ այսօ՛ր, երբ հաւատացեալ մը նեղութիւն կը կրէ, պարտի գիտնալ թէ նպատակակէտի՛ մը համար է իր ցաւը: Յիսուս Զրիստոս Ի՛նքն ալ մարմնական չարչարանքներո՛ւ մէջ փրկագործեց խաչքամող հոռմէացի հարիւրապետն ու ապաշխարող և իրեն հաւատացող խաչեալ աւագակը որ ըսաւ. *«Տէ՛ր, յիշէ՛ զյս, երբ քու թագաւորութեամբդ գաս»:*

Յիսուս անմիջապէս պատասխանեց ըսելով.

***«Ճշմարիտ կ'ըսեմ քեզի այսօր,  
ինծի հետ դրախտին մէջ պիտի ըլլաս»:***

Թող չկարծուի՛ թէ մեզ հա՛յրաբար սիրող Աստուած, անփոյթօրէն կը դիտէ Իր զաւակները և պարզ հանդիսատես մըն է անոնց հալածանքներուն և թշուառութեան: Ո՛չ երբեք: Ան կը տեսնէ՛ մեր ցաւերը, կը զգա՛յ մեր չարչարանքները ու կ'ըսէ. "Enough is enough" ու

*մինչ Սողոս Գամակոսի կը մօտենար, յանկարծ  
երկինքէն լոյս մը փայլատակեց, երկնքի աներեւոյթ սակայն  
հրեղէ՛ն գանձն, Սողոսի ջուրջ:*

*«Ան գետին ինկաւ և լսեց ձայն մը, որ իրեն կ'ըսէր.*

***«Սողո՛ս, Սողոս, ինչո՞ւ կը հալածես զիս»:***

*«Մ՛կ ես, Տէ՛ր», հարցուց Սողոս.*

*Ձայնը պատասխանեց.*

***«Ես Յիսուսն եմ, որ դու ն կը հալածես: Հիմա  
ոտքի՛ ել և քաղաք մտիր, հոն քեզի պիտի ըսուի ինչ  
որ պիտի ընես»:***

*Սողոսի ընկերացող մարդիկը անջըռու չկեցեր էին,  
միայն ձայնը կը լսէին, բայց ոնէ մէկը չէին տեսներ:  
Սողոս երբ գետնէն բարձրացաւ, փորձեց իր ջուրջը նայիլ,  
բայց ոնէ բան չէր տեսներ: Տեսոյ իր ձեռքէն բռնելով՝  
Գամակոս մտցուցին, ուր երեք օր կողք վիճակի մէջ  
սպասեց, և այդ օրերուն ո՛չ կերաւ և ո՛չ խմեց.*

*Գամակոսի մէջ կար Տիրոջ հետեւորդ մը, որ Անանիա  
կը կոչուէր: Ասիկա տեսիլք մը ունեցաւ, որուն մէջ Տէրը  
իրեն ըսաւ.*

***«Անանիա՛»:***

*«Այո՛, Տէ՛ր», պատասխանեց ան:*

Էս Տէրը ըսաւ իրեն.

**Առա՛ի՛ ել, գնա՛ Առիփ կոչուած փողոցը, Յու-  
դայի տունը, և հարցուր Աողոս անունով Տարսուցիի  
մը մասին, որ այս պահու ն աղօթքի կանգնած է:**

Անիկա տեսիլիքի մը մէջ տեսաւ Անանիա անունով մէկը, որ  
ներս մտնելով՝ ձեռները դրաւ իր գլխու և, որպէսզի ինք  
վերստին տեսնէ.

«Տէ՛ր», պատասխանեց Անանիա, ջատերէն լսեցի այդ  
մարդուն մասին և էրուսաղէ՛մի մէջ բու հաւատացեալ  
ժողովուրդիդ դէմ անոր գործած բազմաթիւ չարիքներուն  
մասին: Ես այստեղ եկած է աւագ Բահանաներուն կողմէ  
լիազօրուած, ձերբակալելու համար բոլոր անոնք՝ որոնք  
հեղ կը պաշտեն: (Անանիա երբ տարակրատանքի և  
մտահուստի մէջ ջուարած էր):

Տէրը ըսաւ անոր.

**«Դու ն գնա՛, որովհետեւ ես գայն իբրեւ գործիք  
քնարեր եմ, որպէսզի իմ անունս ճանչցնէ հեթանոս-  
ներուն, թագաւորներու և Իսրայէլի զաւակներուն:  
Ես ինքս իրեն ցոյց պիտի տամ, թէ ո՛րքան  
չարչարանք պիտի կրէ Իմ անունիս համար:**

Անանիա գնաց մտաւ տունը և ձեռները դնելով, Աողոսի  
գլխու և ըսաւ.

**«Աողո՛ս եղբայր, զիս Տէրը դրկեց, այն Յիսուսը՝ որ  
եկած ճակրուդ վրայ հեղի երեւցաւ: Տիս դրկեց որպէսզի  
տեսնես և Ասոր Հոգիով լեցուիս:**

Անմիջապէս Աողոսի աչքերէն կարծես կեղեւաններ  
իսկան, և սկսաւ տեսնել: Եղաւ մկրտուեցաւ, և ապա  
կերակուր ուտելով զօրացաւ.»--Առաքելոց Թ.3-19:

Առաքելոց գրքին վերոյիջեալ արձանագրութեան մէջ կը գտնուին երկու  
չափազանց հետաքրքրաշարժ խօսքեր, մին պատուիրանն է Յիսուսի, իսկ  
երկրորդը՝ Անանիայի մօտեցումը Աողոսի:

1. Մեր Տէրը Յիսուս կը կանչէ հաւատարիմ աշակերտներէն մին՝ Անանիան, և  
կը ջանայ դրկել գայն ապաշխարած ու դարձի եկած Տարսուցի Փարիսեցիի  
մը, որ նախապէս կը ճանչցուէր "մահուան հրեշտակը" Յիսուսի Եկեղեցի  
անուանեալ հաւատացեալներուն: Ողորմելի Անանիա աշակերտը, որ չէր  
գիտեր թէ ի՞նչ պատահած էր հաւատացեալներու ոխերիմ թշնամի Աողոսին,  
կը սկսի վիճիլ իր Տիրոջ Յիսուսի հետ, բացատրելով այդ անձին պատճառած  
վնասները Երուսաղէմի Եկեղեցւոյ:

Ճարահատ և Բաղքահոգի Յիսուս, ի վերջոյ կ'ըսէ Անանիայի,

**«Դու ն գ ն ա՛ւ»:**

Տէր Յիսուսի աշակերտող մը պարտ է ճանչնալ իր Փրկիչը ոչ միայն որպէս մուսջ, անարգուած ու խաչեալ նոխա՛գ մը, այլ Յարուցեա՛լ Տէրը համայն տիեզերքին: Ան, Յարութենէն յետոյ ջանաց քաջալերել, յուսադրել և խանդավառել աշակերտները, ըսելով.

**«Ամէն իշխանութիւն արուեցաւ ինձի երկինքի մէջ և երկրի վրայ: Ինչպէս որ Հայրը զիս դրկեց, այնպէս ալ ես ձեզ կը դրկեմ: Հեռեաքաք, գացէ՛ք և բոլոր ժողովուրդները ինձի աշակերտ դարձուցէ՛ք: . . . Անոնց սորվեցուցէ՛ք այն բոլոր պատուիրանները (ոչ վարդապետութիւն) որ ես ձեզի տուի. և ահա միջոց ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ աշխարհիս վախճանը»--Մատթէոս ԻԸ.18-20:**

2. Այս երկրորդ աստուածասէնչ իրողութիւնը, Անանիա աշակերտին ամբողջական հոգեկան փոփոխութիւնն է, որ ան սիրո՛ւմ հնազանդեցաւ Յիսուսի: Անոր մօտեցումը Սօղոսի, չեղաւ վրէժխնդրակա՛ն արտայայտութեամբ որ Սօղոս ատելութեամբ կը վերաբերուէր Քրիստոնեաներու հանդէպ, այլ եղաւ Քրիստոսի սիրո՛յ հոգիովը: Անանիա երբ առաջին անգամ ըլլալով հանդիպեցաւ Սօղոսին, իր առաջին ողջոյնը եղաւ.

**«Սօղոս եղբայր»:**

Ես վստահ եմ, որ երբ Սօղոս իմացաւ "եղբայր" ողջունի բառը Յիսուսի աշակերտողէ մը, դաշունահար եղածի մը պէս զգացուեցաւ: Ինչո՞ւ այդպէս կարծուի: Որովհետեւ տիեզերքի մեծագոյն գօրութիւնը, որով Աստուած կը գործէ, **կարենալ սիրե՛լն** է, ո՛չ միայն քեզ սիրողները այլ սիրել նոյնիսկ չսիրուելիք անձ մը նման ատելավառ Սօղոս մը:

Վերոյիշեալ հատուածին գրութիւնը կ'ուզեմ ուղղել իմ սիրելի ազգակիցներուս: Ամէն Ապրիլ 25-ի Մեծ Եղեռնին, երբ բոլոր Հայերս կը տօնենք և կը յիշատակենք մեր սպաննուած սիրելի եղբայրներն ու բոյրերը, ինչպիսի՞ հոգիով կը վերադառնանք տուն, ատելավա՞ռ հոգիով, թէ սգաւոր մտածումով, վրէժխնդրութեա՞մբ, թէ բարիք փոխադարձելու մեր թշնամիներուն:

Իմ համեստ կեանքիս ընթացքին, ինձի ալ վիճակուեցաւ բազմաթիւ անգամներ հանդիպիլ թէ՛ թուրքերու և թէ՛ ալ քիւրտերու զանազան տեղեր: Առաջին անգամ հանդիպեցայ Հայ բարեկամի մը գործատեղին, ու երբ իմացայ թրքերէն խօսիլնին, ես ալ հետաքրքրութեամբ ընկերացայ խօսակցութեան:

Փոխանակ ասելովառ հոգիով իրեն վերյիջեցնելու թուրքերուն գազանային վայրագութիւնները, բացատրեցի թէ ի՞նչպէս ես ալ թրքերէն կը խօսիմ: Այս անձը որուն հետ կը խօսէի երբ մնաք բարով ըսելով կը վերադառնար իր ինքնաշարժը տեսայ որ վերադարձաւ ու քաջաբար ու սիրուն ժպիտով մը, ըսաւ ինձի. «Իմ մեծ մայրս հայ էր»: Ահաւասիկ, իմ իր հետ սիրով խօսիլս իրեն յիշեցուց որ ի՞նք ես հայու՛ գաւա՛կ է:

Առաւօտ մը երբ տան դուռս բացի պարտէզ ելլելու, հանդիպեցայ 4-5 անծանօթ անձերու որոնք մեր բովի նորաջէն սուներ կը ծեփէին: Նայեցայ և ուզեցի գիտնալ թէ ի՞նչ ազգի կը պատկանին, որովհետեւ գանատացի չէին ու ոչ ալ եւրոպացի և ոչ ալ արաբ: Վերի յարկը ծեփողներէն մին վար իջաւ և ըսաւ թէ ինք և իր ընկերները ֆիւրտեր են: հարցուցի թէ թրքերէն կը խօսի՞ն: Ապահով միասին թրքերէն խօսիլ ու աւելի մտերիմ զգացիմք զիրար: հարցուցի իրենց թէ առաւօտեան սուրճերնին խմա՞ծ են, ըսին թէ քիչ վերջ պիտի երթան և բերեն: Իրենց ըսի թէ ես կը պատրաստեմ, երթալու հարկ չի կայ:

Գացի խոհանոց և իրենց հինգ մեծ գաւաթներով սուրճ պատրաստեցի և հրամցուցի: Երբ բանի մը օր վերջ գործերնին աւարտած էր ու պիտի մեկնէին, զիրենք մեր սուներ հրաւիրեցի և սուրճ ու անուջեղէն հրամցուցի որպէս երթաք բարովի: Ինչո՞ւ այս բոլոր յոգնութիւնը և հիւրասիրութիւնը: Մենք կը մոռնանք, որ հարիւր հազարաւոր հայ անչափահաս պատանիներ և աղջիկներ, Մեծ Եղեռնին առեւանգուեցան ֆիւրտերու կողմէ, իսլամացուեցան և ֆիւրտերու հետ ամուսնացան: Ինչո՞ւ չի հիւրասիրեմ ներկայի երրորդ և չորրորդ սերունդ ֆիւրտերը որոնց մէջ հաւանաբար պիտի ըլլան հայու գաւակներ ալ: Բոլոր ֆիւրտերու և թուրքերու հետ խօսած ժամանակին իրենց անուններով չէի խօսիր, այլ կ'ըսեմ «թուրք քարտաշարըմ» կամ «ֆիւրտ քարտաշարըմ» Կրնայ պատահիլ որ կարգ մը հայեր զիս անպատուեն, սակայն ես ինքս, որպէս հայ-Քրիստոնեայ կ'ուզեմ հետեւիլ մեր Տէր և Փրկիչ Յիսուսին:

Մի բանի տարիներ անցած էին և օր մը տան դռան գանգակը զարկաւ և գացի դուռը բացի: Դիմացս կանգնած էր ժպտադեմ երիտասարդ պարուն մը: Հարցուցի իրեն թէ ի՞նչ կրնայի ընել, ըսաւ ինձի, «Զիս չէ՞ս յիշեր,» երբ տակաւին ես կը մտածէի, ըսաւ ինձի «Ես բու ֆիւրտ քարտաշարդ եմ, յետոյ ըսաւ որ այս կողմերէն կ'անցնէր ու չկրցաւ առանց զիս ողջունելու անցնիլ ու երթալ. . . : Ահաւասիկ ա՛յս է աստուածհաճոյ ըլլալ: Ու դեռ ջատ անգամներ:

**Կ'ուզէ՞ք աշխարհ երկրագունդը կտա՞վառող թեկնածու  
ըլլալ: Միակ կերպը սիրո՞յ՝ զօրութեամբ է որ մեզի սորվեցուց  
Յիսուս Զրիստոս Իր ապրելակերպով ու պատուերներով:**

**Մայիս 22, 2006  
Թորոնթօ**

# **ՏԻԵՋԵՐՔԻ ՀԶՕՐԱԳՈՅՆ ՈՒԺԸ ՍԷՐՆ Է**

1. Տիեզերքի Հզօրագոյն Ուժը Սէ՛րն է
2. “Օրէնքի Գիրքին Մէջ Գրուածը Ի՞նչ է,  
Ինչպէ՞ս Կը Հասկնաս”
3. Աշխարհ Երկրագունդը Տիրապետել Ցանկացող  
Բռնակալ Եւ Ճուայտ Թեկնածուները

**THE MOST POWERFUL FORCE OF THE  
UNIVERSE, IS LOVE**

**ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ  
ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ  
ԹՈՒԱԿԱՆ**